Կրաստներ

6852

Վերջալույսի ափերը.

891.99
Ա-92

1919

2015

ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՎԵՐՋԱԼՈՑՍԻ ԱՓՈՒՆՔ

118

Հրատարակութիւն «ՑՈՑՍ»
1919

2003

Ա-92

ԱԳՌԱՒԻՆ ԵՐԳԸ

43278.ա.հ.

—

Ղը՛ռ ղը՛ռ, ղը՛ռ...

Իրիկնաժամի արևաբոսոր հորիզոններից երկինքն ակօսելով իր սև մրթութեամբ ագռաւն եկաւ...

Եկաւ շատ հեռուից օտար օտար վայրերից, ուր ընկել են պայքարամերժ յաղթուածներ, ուր պառկել են իրար կողքի, իրար գրկած ու իրար հետ անբաժան արեան մէջ վիրաժայթ ու կսպառնան վերջալոյսի ափերին արևածոր հայեացքով և բռունցքով թուլավէր...

Ագռաւն եկաւ հեռաւոր, ամայավայր դաշտի մէջ չոքեց՝ ընկածների գլխին, եկաւ՝ չոքեց, չոքեց՝ երգեց ..

—

Ղը՛ռ, ղը՛ռ, ղը՛ռ...

Հիրիկներն այնպէս լացին, լացին և քնեցին, քնեցին...

Զղջիկն ինչ էր պատմում ճահճի վրայ գիշերասա՛ւեր. ես չմացայ, բայց ես տեսայ թէ՝ ինչպէս արևելքն էր թօշնել.

Այդ ես տեսայ, տեսայ, թռայ..

Պար կայ, պար կայ, այստեղ, այնտեղ, ամեն տեղ.

Ո՞վ է ասում՝ կեանքն է հոսում, մարդիկ մեռնում .. Կիրքն է եռում մեր երկրում, մեր երկրում. Բուն էլ կգայ շուտով հանգիստ, այդ դու գիտես...

Մենք միասին երգ կսկսենք ու կը-երգենք մենք միասին...

Ղը՛ռ, ղը՛ռ, ղը՛ռ...

Եկէք, եկէք հարս ու աղջիկ բու և չղջիկ.

Անթեն այս, ընկածն այն ինչ են լռել, ունայն, ունայն ..

Դուք էլ եկէք, մենք միասին կեանքի ափին՝ վերջալոյսի արիւնի մէջ պարենք ուրախ, պարենք ուրախ..

Վարդերն այնպէս դեղնեցին, յասմիկն այսօր չի բացուելու, շուշանները թօշնեցին.

Լալէն, լալէն այնպէս սիրուն, այնքան կարմիր՝ ինչպէս արիւն, ա՛յ, սրանց պէս ժպտում է գոհ ու կարմրում արևուտ երկնքից գողցած բոսորներից...

Սրանք ինչո՞ւ չեն շարժւում.—

Միթէ՞, ինչո՞ւ վատ, որ լալէն այնքան կարմիր է գողացել... կարմիր լալէն, կարմիր լալէն ..

Ղը՛ռ, ղը՛ռ, ղը՛ռ...

—

Եւ վիրախոց բացուածքների բոսորի մօտ, վերջալոյսի եզերքին ագռաւը սև երգեց իւր սգողը.

Ղը՛ռ, ղը՛ռ, ղը՛ռ...

Փշրագէն, մահադիմակ, դիակնամահ ամայավայրի լռութեան փէշերի ծայրին ագռաւն սգահանդէս էր ձայնում, ձայնում, երգում, երգում՝ կանչում...

Ղը՛ռ, ղը՛ռ, ղը՛ռ..

Գ/
35975-62
ՀՍՍՀ-ՍՍՍՌ

6852

24

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Սեմյանի անվ.
Ц. им. А. Мясн

2013